600.0365.27.09.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 սեպտեմբերի 2019 թվականի №365Ա
ք. Երևան

«ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0540 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի սեպտեմբերի 24-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 23-ի «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Վայոց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №101Ա որոշմամբ «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0540 լիցենզիան՝ լիցենզիայի պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.
   «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղամաս շ. 2,55 տարածք»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի սեպտեմբերի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
27 սեպտեմբերի 2019